600.0110.06.05.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 մայիսի 2016 թվականի №110Ա
քաղ. Երևան

«ԿՈՎԿԱՍՅԱՆ ԷԼԵԿՏՐԱՀԱՂՈՐԴՄԱՆ ՑԱՆՑ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև 2015 թվականի մարտի 16-ին կնքված ֆինանսական պայմանագիրը, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության միջև 2016 թվականի մարտի 12-ին կնքված ենթավարկային պայմանագիրը, որոնց շրջանակներում ներգրավված «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց» ծրագրի իրականացմանն ուղղված 10 000 000 (տասը միլիոն) եվրո գումարի չափով ներդրումները հանդիսանում են Հայաստանի Հանրապետության կառավարության միջնորդությամբ ստացված արտոնյալ վարկային միջոցների հաշվին իրականացվող ներդրումներ, և հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ժդ» կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց» ծրագրի իրականացմանն ուղղված ներդրումային ծրագրի շրջանակում ներգրավված միջոցների՝ Եվրոպական ներդրումային բանկի կողմից 10 000 000 (տասը միլիոն) եվրո գումարի չափով տրամադրված վարկի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը հնարավոր համաֆինանսավորվող գումարների վերադարձը կապահովվի էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության

մատուցման սակագնի հաշվարկում դրանց սպասարկման և մարման ծախսերը ներառելու միջոցով՝ ըստ ենթավարկային պայմանագրում ամրագրված պայմանների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Շ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ք. Երևան
6 մայիսի 2016թ.
ժամը 16^{00}